

Ա. Խ. ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

(ճարտարապետական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր)

ՄՈԼԴԱՎԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (ՀՆՉԵՇՏԻ ԵԿԵՂԵՑԻՆ)

ԺԹ դ. երկրորդ տասնամյակի սկզբներին Հնչեշտում (այժմ՝ Կոթովսկ քաղաք, Մոլդավական ՍՍՀ) հիմնադրվեց դիվանագետ և կալվածատեր հայազգի Մանուկ Միրզոյանի, հայտնի որպես Մանուկ-բեյ, դաստակերտը: Ենթադրվում է, որ այս ժամանակաշրջանին է պատկանում այժմ պահպանված չորսսյունանոց միահարկ շենքը, որի ճարտարապետության մեջ արտացոլված են Մոլդավիայի, Հարավային Ռուսաստանի և այլ տեղերում գոյություն ունեցող նույն ժամանակաշրջանի շենքերի ոճական առանձնահատկությունները: Նույն դարի 60-ական թվականներին դաստակերտը կառուցապատվում է վանական շենքերով, որոնք դարի վերջում կազմում էին մի ամբողջական և միասնական ճարտարապետական համալիր: Այս հնարավոր է դառնում Մանուկ Միրզոյանի որդու՝ Մուրադի շինարարական եռուն գործունեության շնորհիվ: Նա համալիրի շենքերի նախագծման և իրականացման գործը հանձնարարում է Հարավային Ռուսաստանի ճանաչված ճարտարապետ Ալեքսանդր Հովսեփի Բեռնարդացուն:

Համալիրի կազմի ուսումնասիրությունը թույլ է տալիս վեր հանել մի շարք առանձնահատկություններ: Շենքերը տեղավորված են ըստ իրենց ֆունկցիոնալ նպատակների, մի հանգամանք, որը ոչ պակաս կարևոր է համալիրի ճարտարապետա-գեղարվեստական արժեքը կանխորոշելու համար: Այսպես համալիրի հիմնական միջուկը կազմում է վերոհիշյալ միահարկ չորսսյունանոց շենքը, որտեղ, ինչպես կարելի է ենթադրել, մինչև իր մահը (1817 թ.) ապրել է Մանուկ Միրզոյանը: Այս շենքին զուգահեռ է այժմ երկհարկանի պալատական կառույցը (1861 թ.), որը մեծապես վնասվեց երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Այս երկու կառույցները կազմում են համալիրի կենտրոնական մասը: Նրանց հյուսիսային կողմը, մոտավորապես 150 մետր հեռու, գտնվում էր հայկական Սբ. Աստվածածին եկեղեցին (1878 թ., չի պահպանվել): Նրա հյուսիս-արևելյան մասում գտնվում էին այժմ նույնպես գոյություն չունեցող մատուռը և մի շարք այլ օժանդակ կառույցներ: Այս շենքերից դեպի հյուսիս սկսվում էր հայկական գերեզմանոցը, որից գրեթե ոչինչ չի պահպանվել, բացառությամբ երկու-երեք գերեզմանաքարերի՝ մեկը պատկանող Նապարովին, մյուսը՝ անանուն: Համալիրի նշված հիմնական միջուկի հակառակ կողմը, այսինքն՝ դեպի հարավ, մոտ 100—110 մետր հեռու, գտնվում է երկհարկանի «Որսորդական տունը» (1881 թ.)՝ կազմելով պալատական կառույցից հետո մի ընդհանուր գիծ: Այս շենքից դեպի հարավ, նույնքան հեռու, գտնվում է մի փոքր երկծավալ կառույց՝ «Պահակատան աշտարակը»: Այս բոլոր կանգուն կառույցները, բացառությամբ չորսսյունանոց շենքի, կառուցված են համալիրի հա-

Նկ. 1. Հնչեշտ (այժմ՝ Կոթովսկ քաղաք, Մոլդ. ՍՍՀ). Սբ. Աստվածածին եկեղեցու հարավային պատի մնացորդները

րավային կողմում: Բացի այդ, համալիրի կազմի մեջ են մտնում նաև այլ կառույցներ, որոնք կբաղեցնում են նշված շեքերի արևմտյան կողմի տարածքը: Այդպիսին են «Սպիտակ հողանոցը» (որը այս անունն է կրում սվաղված սպիտակ պատերի պատճառով) և նախկին ձիանոցի վերակառուցված շենքը, որն այժմ ծառայում է որպես ճաշարան:

Եթե համալիրի պահպանված կառույցների ծավալա-հատակագծային և գեղարվեստական առանձնահատկությունների մասին կարելի է անել որոշակի եզրահանգումներ և գնահատել դրանց արժանիքները, ապա

Նկ. 2. Հնչեշտ (այժմ՝ Կոթովսկ քաղաք, Մոլդ. ՍՍՀ). Սբ. Աստվածածին եկեղեցու արևելյան խորանի պատի մնացորդները

անվերադարձ կորած կառույցների մասին կարելի է դատել միայն առանձին լուսանկարներով, որոնք պատկերում են շենքերի որոշ արտաքին մասերը:

Հաշվի առնելով ԺԹ դ. Մոլդավիայի ճարտարապետության համար համալիրի ունեցած նշանակությունը, վերակառուցել են նրա առանձին շենքերը, որոնք այսօր օգտագործվում են այլ նպատակների համար: Այսպես, պալատական շենքում տեղավորված է քաղաքի շինարարական տեխնիկումը, իսկ «Որսորդական տան» մեջ այժմ գտնվում է պատմա-գավառագիտական թանգարանը: Այդ էր պատճառը, որ, շնորհիվ թանգարանի նախաձեռնության, սկսվեցին պեղումներ այն տարածքի վրա, որտեղ գտնվում էր հայկական եկեղեցին: Այդ պեղումներով էլ պայ-

մանավորվեց եկեղեցու առանձնահատկությունների ուսումնասիրությունը[1]:

Այսպես, ետնի ներկա մակերեսից մոտ 1,10 մետր խորության վրա, հիշված տարածքի հյուսիս-արևելյան մասում, բացվեց եկեղեցու արևելյան պատի հյուսիսային մի փոքր հատվածը: Այս հատվածից մենք շարունակեցինք պեղումները արևելյան պատի երկարությամբ՝ հասնելով հարավային պատին (նկ. 1): Բացելով արևելյան և հարավային պատերի ամբողջ երկարությունը՝ այս անգամ պեղումները շարունակեցինք եկեղեցու հյուսիսային մասում, որտեղ երևացին շենքի պատերի հատվածներ: Եկեղեցու պատերի մնացորդները և նրա այլ հետքերը թույլ են տալիս որոշելու եկեղեցու իրական դրության հետևյալ պատկերը, համարյա ամբողջությամբ վերացել են եկեղեցու աղոթասրահի հյուսիսային և մասամբ հարավային պատերը, պահպանվել է հարավային խաչաթևի արևելյան պատի ոչ մեծ հատվածը: Սակայն եկեղեցու պահպանված մնացորդները, ինչպես և թանգարանում պահպանված եկեղեցու լուսանկարը, որը պատկերում է նրա արևմտյան կողմը, հնարավորություն են տալիս որոշելու եկեղեցու ծավալա-տարածական և հատակագծային հորինվածքը: Այսպես, ուրեմն, շենքը արևելքից-արևմուտք ձգված մի աղոթասրահ է, որը արևելքում ավարտվում է ոչ լրիվ կիսակլոր ձև ունեցող խորանով (լայնությունը՝ 5,18 մետր և խորությունը՝ 1,57 մետր): Խորանի հյուսիսային և հարավային կողմերի վրա էին գտնվում ուղղանկյուն, հյուսիս-հարավ ձգված գլխավոր առանցքներով ավանդատները՝ 4,56 մետր երկարությամբ: Ուշագրավ է, որ այս ավանդատները կարծես թե կից են աղոթասրահին: Հենց այսպիսի փոխհարաբերությունն է կանխորոշել եկեղեցու արևելյան մասի խաչաձև հորինվածքը: Աղոթասրահը, որը կազմում է ամբողջ եկեղեցու մակերեսի նշանակալից մասը, ունի մոտ 9,0 մետր լայնություն՝ ըստ արտաքին պատերի: Այս պատերից ավանդատները առաջ են գալիս 1,55 մետր չափով: Համաձայն մեր չափագրությունների, հարավ-արևելյան ավանդատան արևմտյան պատից 3,7 մետր հեռու, աղոթասրահի հարավային պատին կից էր հնգանիստ մի ծավալ: Նրա կուգահեռ պատերը, որոնք կից էին արևմտյան պատին, եկեղեցու կանգուն եղած ժամանակ ծառայում էին որպես նրա հարավային խաչաթևի արևելյան և արևմտյան պատեր: Ինչ վերաբերում է եռակող պատերին, որոնք կից են այդ խաչաթևին, ապա դրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ եռակող խորանի պատերը, որոնց բարձրությունը կգալի չափով ցածր է խաչաթևի պատերից: Ըստ մեր պեղումների, նյութերի, խաչաթևի լայնությունը հավասար է 5,5 մետրի, իսկ երկարությունը՝ 2,9 մետրի:



Նկ. 3. Հնչեշտ (այժմ՝ Կոթովսկ քաղաք, Մոլդ. ՍՍՀ). Սբ. Աստվածածին եկեղեցու հատակագիծը

Եկեղեցու շինարարության համար օգտագործվել են փայտ, քար և աղյուս: Այսպես, փայտը ծառայել է շենքի կմախքը ստեղծելու համար, որի նպատակն է եղել կրել շենքի հիմնական ծանրությունը և, միաժամանակ, ներքին տարածությունը պաշտպանել մթնոլորտային գործոնների ազդեցությունից: Փայտյա կլոր սյուների փտած մնացորդներ են (0,26—0,30 մետր տրամագծով) պահպանվել արևելյան խորանի և ավանդատների պատերի մեջ: Կմախքի սյուների քայլը անհավասար է և տատանվում է 1,1 մետրից—1,35 մետրի սահմաններում: Եկեղեցու պատերը կառուցված են 0,26×0,13×0,06 մետր չափերի աղյուսից: Այս պատերի հաստությունը հավասար է 0,41 մետրի: Ուշագրավ է, որ եկեղեցու խաչի հարավային թևի պատերը շինված են աղյուսից: Դրանց հաստությունը 0,26—0,27 մետր է, այսինքն՝ հավասար է աղյուսի լայնության չափին: Եռակողմ պատի պահպանված մասերը՝ նշված խաչի թևին կից պատին, թույլ են տալիս ասելու, որ այն եղել է քարից, կամ, որ շատ հավանական է, ծառայել է որպես հիմք այժմ գոյություն չունեցող աղյուսե պատի համար:

[1] Պեղումներն սկսվեցին 1982 թ. սեպտեմբերի վերջին և շարունակվեցին մինչև հոկտեմբերի վերջը:

Այս պատի հաստությունը տատանվում է 0,70—0,71 մետրի սահմաններում: Հյուսիս-արևելյան ավանդատան հյուսիսային պատի երկու ծայրերում, ինչպես և հարավ-արևելյանի հարավային պատի շարվածքում, փայտյա կմախքի սյուները ամբողջությամբ մըտնում են նշված պատերի շարվածքի հաստության մեջ: Հետաքրքիր է, որ այստեղ, աղյուսի պատերը, ինչպես եկեղեցու ներսի, այնպես էլ դրսի կողմից երեսապատում են սյուները ընդամենը մի քառորդ աղյուսի չափով, այսինքն՝ 0,06 մետրով: Նկատվում է նաև կմախքի փայտյա սյուների տեղադրման մի ուրիշ պատկեր, որը կանխորոշել է շենքի այդ մասի նշանակությունը և որի համար դատների բաժանմամբ: Եկեղեցու խաչի հարավային թևի արևելյան աղյուսաշեն բարակ պատի մեջ փայտյա սյուների տեղադրումը նպատակ է ունեցել ապահովելու պատի (բարձրությունը ավելի քան 3 մետր) կայունությունը: Ինչ վերաբերում է կմախքի սյուներին, դրանք միայն մի փոքր չափով են դուրս գալիս եկեղեցու առանձին մասերի պատերի ներքին մակերեսից: Կարելի է ասել, որ դրանք ծառայել են որպես կոնստրուկտիվ մաս այդ մասերի հատակի համար կամ ստեղծել են նրա տակ լրացուցիչ տարածություններ:

Առանձնապես անհրաժեշտ է կանգ առնել աղոթասրահի հարավ-արևմտյան ավանդա-

Նկ. 4. Բելգորոդ-Դնեստրովսկի. 1699 թ. արձանագրությունը

ընտրվել է համապատասխան կոնստրուկցիա: Դա արտահայտվել է նրանով, որ սյուները իրենց տրամագծի չափով, մի քիչ էլ ավելի, կից են եկեղեցու համապատասխան պատերին: Դա առանձնապես լավ է երևում եկեղեցու արևելյան խորանի երկու ծայրերում, այսինքն արևելյան՝ ուղիղ և արևելյան՝ կիսակլոր պատերի հատման երկու տեղերում: Այսպիսի լուծում պարզ արտահայտված է նաև եկեղեցու հարավային պատի արևելյան հատվածում: Սա վկայում է, որ հավանաբար համապատասխան ուղղությամբ շարված են եղել պատեր, որոնք և կպմել են հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան ավանդատների պատերը: Այսպիսի լուծումը շատ հնարավոր է, դա պայմանավորված է եղել պաշտամունքային պահանջներով և այս դեպքում արտահայտվել է խորանի և ավանտան և արևելյան պատի հարավային հատվածի աղյուսաշեն պատերի հիմքերի վրա: Այսպես, բարձրությամբ 1,2 մետր պահպանված հարավային պատի տակ, նրա ներսի կողմից, երևում է 0,12—0,13 մետր լայնությամբ և նույն չափերի բարձրությամբ մի ելուստ: Այս աստիճանավոր պատի հիմքը, նրա ամբողջ երկարությամբ, դրված է 0,08—0,10 մետր ավազի շերտի վրա: Այդպիսին է հիշված ավանդատան հարավային պատի հիմքը: Ի տարբերություն այս կոնստրուկտիվ հորինվածքների, եկեղեցու արևելյան պատի հարավային հատվածի հիմքը բնորոշվում է ավելի մեծ ելուստով, որը երևում է պատի ներսի և դրսի կողմերից: Այսպես, ներքին ելուստի լայնությունը հավասար է 0,33 մետրի, իսկ բարձրությունը՝ ավելի քան 0,06 մետրի: Սակայն դրսի ելուստը անհա-

մեմատ լայն է՝ 0,40—0,50 մետր, բարձրությունը՝ 0,06 մետր: Ուշագրավ է, որ այս հիմքի տակ փռված է ավազաշերտ, որի հաստությունը տատանվում է 0,08—0,10 մետրի սահմաններում: Իսկ դրսի ելուստը ուղղակի դրված է մայր հողի վրա: Հիշատակության արժանի է նաև այն, որ նշված ելուստների վերևի մակերեսից մինչև պատի ավագի շերտի ներքևի մասը, որը մոտ 0,80—0,90 մետր է, երևում է խնամքով կատարված աղյուսի շարվածք: Դա ցույց է տալիս, որ պատի այս մասը, նրա ամբողջ երկարությամբ, գտնվում էր գետնի տակ, այսինքն՝ այն ոչ այլ ինչ էր, եթե ոչ եկեղեցու աղյուսաշեն հիմք, որի վրա շարված էին այժմ գոյություն չունեցող եկեղեցու պատերը: Ոչ պակաս ուշագրավ է նաև այս պատ-հիմքի շարվածքի որակի առանձնահատկությունը, որը արտահայտվում է նրանով, որ արտաքին մակերեսի շարվածքը քիչ թե շատ խնամքով է կատարված, իսկ ներքինը՝ անփույթ: Հավանական է, որ առաջին դեպքում այդ պայմանավորված էր նրանով, որ պատի դրսի մակարեսը պետք է ունենար սվաղի շերտ՝ այն, ինչ նախատեսված չէր ներսի համար: Հավանական է նաև այն, որ խնամքով իրականացված պատի դրսի մակերեսը նպատակ ուներ նպաստելու արագ ջրահեռացմանը (նկ. 2): Նույն բանն է ցույց տալիս եկեղեցու նշված մասերի կրող պատերի տակ ավազաշերտի գոյությունը: Նշված պատերի նկատմամբ ցուցաբերված այսպիսի խնամքի դեպքում տարօրինակ է թվում այն, որ եկեղեցու խաչի հարավային թևի արևելյան և արևմտյան աղյուսապատերը, ինչպես նաև եռակողմ քարե պատը ուղղակի դրված են մայր հողի վրա՝ չունենալով իրենց տակը ոչ մի ապահովիչ ավազաշերտ: Հետաքրքիր է նաև այն, որ դրանց ներքին մակերեսը գտնվում է եկեղեցու նշված պատերի հիմքերի մակերեսից մոտ 0,50—0,60 մետր բարձրության վրա: Սա վկայում է, որ նշված պատերը և, հետևաբար, իրենց մասերը ավելի ուշ ժամանակի արդյունք են, այսինքն՝ դրանք, ինչպես աղոթասրահի արևելյան խորանը և ավանդատները, նախապես գոյություն են ունեցել:

Պեղումների ժամանակ հայտնաբերված ծեփի մնացորդները, ինչպես նաև եկեղեցու ճակատների առանձին հատվածների բազմազարդ տեսքը, որը երևում է թանգարանում գտնվող եկեղեցու լուսանկարից, վկայում են, որ եկեղեցին հարուստ է եղել ճարտարապետա-գեղարվեստական դեկորով: Մեր կարծիքով, հայտնաբերված բեկորները հանդիսանում էին հարավային, արևմտյան, հյուսիսային կամ գմբեթավոր թմբուկի անկյունային դեկորատիվ որմնասյուները, լուսամուտների կամ նույն նշանակությունն ունեցող (այսինքն՝ դեկորատիվ) ճակատների խորշերի շրջակալները և այլն: Այս բեկորների ծեփի մնացորդների վրա, որոնք, մեր կարծիքով, պատկանում էին միայն և միայն դրսի պատերին, նկատվում են կապույտ, դեղին և մոխրագույն ներկեր: Դա ցույց է տալիս, որ եկեղեցին ժամանակի ընթացքում հաջորդաբար ներկվել է նշված գույներով: Անհրաժեշտ է նշել նաև, որ այս գույների գամման լրիվ համապատասխանում է նույն ժամանակի և ավելի ուշ շրջանի այն գամմային, որը օգտագործվում էր մոլդավական պաշտամունքային կառույցները ներկելու համար: Պեղումների ժամանակ հայտնաբերվեցին նաև եկեղեցու հատակը երեսապատող քառակուսի (16,5×1,5×1,5 մետր) սրճագույն կերամիկական սալեր, որոնք ամրացվում էին հատակի հիմքի տաք բիտումի շերտի (1,5—2,0 սմ.) վրա: Բացի այս մասերի բեկորներից, պեղումների շնորհիվ բացվեցին նաև գեղարվեստորեն մշակված երկաթյա մասեր, որոնք, հավանաբար, պատկանում էին խորանի ցանկապատին կամ դռների, լուսամուտների ճաղերին:

Այսպիսին է Կոթովսկ քաղաքի պեղված Սբ. Աստվածածին հայկական եկեղեցու այժմյան պատկերը, որը ներկայացնում է մի յուրահատուկ և ինքնուրույն հորինվածք[2]:

Հուշարձանի ճարտարապետա-հատակագծային և կոնստրուկտիվ հորինվածքների նկարագրության ժամանակ մեր կողմից վերհանված առանձնահատկությունները և նրանց համադրումը գոյություն ունեցող վուգահեռների, որոնք մասամբ բնորոշում են Մոլդավիայի և Հայաստանի պաշտամունքային կառույցների ճարտարապետա-շինարարական ավանդները, թույլ են տալիս որոշել եկեղեցու կարգացման երկու փուլ: Առաջին փուլը, որը ընկած է XIX դարի առաջին կեսին, բնորոշվում է փայտաշեն եկեղեցու աղոթասրահի երկարավուն ձևով, նրա արևելյան խորանով և վերջինիս կից ավանդատների հորինվածքով: Շատ հավանական է, որ աղոթասրահի արևմտյան պատին կից էր երկհարկանի կանգակատունը: Այսպիսի հորինվածքը հատուկ է եղել նշված ժամանակի բազմաթիվ մոլդավական փայտաշեն և քարաշեն եկեղեցիներին: Եկեղեցու ճարտարապետության կարգացման երկրորդ փուլը ընդգրկում է 1870—1872 թթ.: Այս շրջանին

[2] **А. Х. Тораманян**, Зодчие четырех армянских церквей Бессарабии XIX—XX вв., «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1969, 12(319), էջ 78, նկ. 2;

են վերաբերում նշված աղոթասրահին կից հարավային, արևմտյան և հյուսիսային մասերը: Ուշագրավ է, որ այս ժամանակ է, որ փայտաշեն կառույցը, պահպանելով իր նախկին հորինվածքը, վերափոխվում է՝ դառնալով աղյուսաշեն (նկ. 3): Այս հատակագծային լուծումը պայմանավորեց հատուկ հայկական ճարտարապետության համար ծավալա-տարածական լուծում:

Այսպիսով, մեր կողմից պեղված և ուսումնասիրված Հնչեշտի Սբ. Աստվածածին եկեղեցին հանդիսանում է ևս մի օղակ XIX դարի մոլդավական ճարտարապետության և հայ-մոլդավական դարավոր բարեկամական կապերի ուսումնասիրության գործում: